ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԴՐԱՄԱԵՐ

2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՈՒՇԱԴՐԱՄԵՐ

2021

ԵՐԵՎԱՆ 2022

Մարտին Գալստյան

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

Հարգելի ընթերցող

Սիրով ներկայացնում ենք «Հայաստանի Հանրապետության հուշադրամներ» տարեկան հանդեսը՝ նվիրված 2021 թ. ՀՀ կենտրոնական բանկի թողարկած հուշադրամներին:

Տարին հիշարժան էր Հայաստանի նորագույն պատմության նշանակալից իրադարձություններով, հայ անվանի անհատների հոբելյաններով, մշակութային տարեդարձերով:

2021 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանը տոնում էր Երրորդ հանրապետության անկախության հռչակման 30-ամյակը: Արժևորելով անկախ Հայաստանի ձեռքբերումներն ու նվաճումները՝ ՀՀ կենտրոնական բանկը թողարկել է «Հայաստանի Հանրապետության 30-ամյակ» հուշադրամը:

Պետական նշանակության մեկ այլ տարեդարձի՝ Անկախ Պետությունների Համագործակցության 30-ամյակի առթիվ ՀՀ կենտրոնական բանկը, ինչպես և ԱՊՀ որոշ անդամ պետությունների բանկեր, թողարկել և միջպետական հոբելյանական միջոցառումների նախօրեին շրջանառության մեջ է դրել «ԱՊՀ 30-ամյակ» հուշադրամը:

Գնահատելով հայ մեծանուն արվեստագետների ստեղծագործական ավանդը՝ թողարկվել են հայկական և համաշխարհային երաժշտական մշակույթի պատմության մեջ անփոխարինելի դերակատարում ունեցած կոմպոզիտորների՝ Ալեքսանդր Սպենդիարյանի 150-ամյակին և Առնո Բաբաջանյանի 100-ամյակին նվիրված հուշադրամները: Այս հանճարեղ անհատների արվեստի շնորհիվ հայկական երաժշտությունը տասնամյակներ շարունակ հնչել է ինքնատիպ և իր առանձնահատուկ տեղը զբաղեցրել համաշխարհային երաժշտական աշխարհում:

ՀՀ կենտրոնական բանկն իր թողարկումներով մշտապես կարևորել է հայ հասարակության կյանքում թատերական արվեստի դերը և, հավատարիմ մնալով ձևավորված ավանդույթին, թողարկել է Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի հիմնադրման 100-ամյակին և Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի կազմակերպման 100-ամյակին նվիրված հուշադրամները:

«Հայաստանը և միջազգային հանրությունը» թեմատիկ շարքի շրջանակում թողարկվել է հայկական սփյուռքի ամենաազդեցիկ կրթական հաստատություններից մեկի՝ Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրման 200-ամյակին նվիրված հուշադրամը: Այս, ինչպես և միջնադարի փիլիսոփա, հասարակական գործիչ և մանկավարժ, Հայոց եկեղեցու եռամեծ վարդապետ Գրիգոր Տաթևացու ծննդյան տարեդարձին նվիրված թողարկումներով կարևորվել է մշակութային-կրթական կենտրոնների և անհատների անուրանալի դերը հայեցի կրթության և դաստիարակության, հայ ժողովրդի ազգային դիմագծի պահպանման գործում:

Շարունակելով մոտ երկու տասնամյակի պատմություն ունեցող ավանդույթը՝ ՀՀ 2021 թ. թողարկման հուշադրամները ներկայացվել են միջազգային դրամագիտական հեղինակավոր մրցույթներում: Ռուսաստանի Դաշնությունում անցկացված «Դրամների համաստեղություն-2021» 15-րդ միջազգային մրցույթում, որտեղ իրենց թողարկումներն են ներկայացրել 31 մասնակից կազմակերպություններ աշխարհի 22 երկրներից, «Ժանսեմ-100» ոսկե հուշադրամը «Դասական հուշադրամ» անվանակարգում արժանացել է 3-րդ մրցանակի, իսկ «Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար» արծաթե հուշադրամը հաղթող է ճանաչվել «Հանդիսատեսի համակրանք» անվանակարգում: Այս բարձր գնահատականներին ՀՀ կենտրոնական բանկի թողարկած հուշադրամներն արժանացել են ինքնատիպ գեղարվեստական ձևավորման, բովանդակային հետաքրքիր լուծումների և հատման արդիական տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ:

ՀՈՒՇԱԴՐԱՄՆԵՐ 2021

Գևորգ Թումանյան

ՀՀ կենտրոնական բանկի Արժույթի թողարկման և դրամագիտության կենտրոնի ղեկավար

2021 թ. ՀՀ կենտրոնական բանկը Լիտվայի դրամահատարանի համագործակցությամբ թողարկել է ութ տեսակի հոբելյանական արծաթե հուշադրամ՝ համալրելով «Հայոց պետականություն», «Հայաստանը և միջազգային հանրությունը», «Անվանի անհատներ» և «Մշակույթ» թեմատիկ շարքերի հուշադրամները:

«Հայաստանի Հանրապետության 30-ամյակ» արծաթե հուշադրամի թողարկումով շարունակվել է Հայաստանի Հանրապետության անկախության տարեդարձերին նվիրված հուշադրամների շարքը, որն առանձնանում է հուշադրամների քաշով՝ 5 տրոյան ունցիա, դրամաշուրթի ձևավորմամբ՝ հարթ, համարակալված, և տամպոտպագրության տեխնոլոգիայի կիրառմամբ:

«Հայաստանը և միջազգային հանրությունը» թեմատիկ շարքի շրջանակում թողարկվել է Անկախ Պետությունների Համագործակցության 30-ամյակին նվիրված արծաթե հուշադրամը: Հուշադրամի դիզայնը պարունակում է խորհրդանշական տարրեր՝ ԱՊՀ անդամ պետությունների խորհրդանիշը և ԱՊՀ ինը անդամ-երկրները խորհրդանշող խաղողի ինը հատիկները, որոնք պատկերված են հայկական զարդանախշերի ֆոնի ներքո:

2021 թ. «Անվանի անհատներ» թեմատիկ շարքը համալրվել է երկու արծաթե հուշադրամներով՝ նվիրված Ալեքսանդր Սպենդիարյանի 150-ամյակին և Առնո Բաբաջանյանի 100-ամյակին: Չնայած այս հուշադրամները ձևավորված են

դասական ոճով, որին բնորոշ է թեմատիկ պատկերների հստակությունը, այնուամենայնիվ դրանք աչքի են ընկնում գեղարվեստական ձևավորման կատարելությամբ և բացառիկ նրբաճաշակությամբ:

2021 թ. հայ թատերական արվեստի բնագավառում նշվել են երկու տարեդարձեր՝ Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի հիմնադրման և Պետրոս Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի կազմավորման 100-ամյա հոբելյանները: Այդ առիթով «Մշակույթ» թեմատիկ շարքի ներքո թողարկվել են այս երկու թատրոնների ամենաճանաչված ներկայացումներից դրվագների պատկերմամբ արծաթե հուշադրամներ, որոնք առանձնանում են գեղարվեստական և տեխնոլոգիական հնարքների կիրառմամբ: Աշխատանքների ընթացքում նամակագրական կապեր են հաստատվել թատրոնների ղեկավարության հետ, ինչի շնորհիվ հստակեցվել է թատրոնների հիմնադրման պատմությանն ու առաջատար դերասաններին առնչվող տեղեկատվությունը:

Արտասահմանում գործող հայկական կրթամշակութային կենտրոններին նվիրված հուշադրամների շարքը հարստացել է Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրման 200-ամյակին նվիրված արծաթե հուշադրամով: Ճեմարանի շենքն ու դրա մոտակայքում գտնվող Սուրբ Նազարեթ հայկական եկեղեցին պատկերված են դասական ոճով և առանձնանում են գեղարվեստական զսպվածությամբ: Հարկ է նշել, որ հուշադրամի տեղեկատվական գրքույկի (բլիստերի) ձևավորման աշխատանքներին մեծ աջակցություն է ցուցաբերել ճեմարանի դասախոսական կազմը:

2021 թ. թողարկված հուշադրամների ցանկում իր պատմական նշանակությամբ առանձնացել է Գրիգոր Տաթևացու ծննդյան 675-ամյակին նվիրված արծաթե հուշադրամը: Հուշադրամի վրա պատկերված Տաթևի վանքի ճարտարապետության յուրահատուկ գեղեցկությունն ընդգծված է լազերային փորագրության տեխնիկայի կիրառմամբ, իսկ Գրիգոր Տաթևացու լուսեղեն պակը խորհրդանշում է ազգային-եկեղեցական սրբադասված գործչի անփոխարինելի ավանդը հայ ժողովրդի մշակութային կյանքում:

2021 թ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված հուշադրամները, ինչպես և նախորդ տարիների թողարկումները, մեծ հետաքրքրություն են առաջացրել լայն հանրության շրջանում և արժանացել մասնագետների բարձր գնահատականին՝ իրենց արժանի տեղը զբաղեցնելով այլ երկրների կենտրոնական բանկերի և դրամահատարանների թողարկումների շարքում:

Հայաստանի Հանրապետության 30-ամյակ (1991-2021)

Թեմա՝ **Հայոց պեսականություն**
Պեսականության պատմություն

Դիմերես՝ ՀՀ զինանշանը՝ հավերժության նշանի ֆոնին:
Դարձերես՝ ոճավորված եռագույնը, զարդանախշ և «Հայաստանի Հանրապետության 30-ամյակ» մակագրությունը:

Էսքիզների հեղինակներն են Հարություն Սամուելյանը *(դիմերես)*,
Վարդան Վարդանյանը *(դարձերես)*:
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925°
Քաշը	168,1 գ
Տրամագիծը	63,0 մմ
Որակը	դրուֆ
Դրամաշուրջը	հարթ, համարակալված
Թողարկման քանակը	300 հատ
Շրջանառության մեջ է դրվել	13.09.2021 թ.

1991 թ. սեպտեմբերի 21-ից Հայաստանի պատմության մեջ սկսվել է Երրորդ հանրապետության շրջանը: Սահմանվել են պետականության խորհրդանիշները՝ Հայաստանի Հանրապետության դրոշը, զինանշանը և օրհներգը: Հիմնվել են պետական պարգևներ՝ կոչումներ, շքանշաններ և մեդալներ:

1993 թ. նոյեմբերի 22-ին շրջանառության մեջ է դրվել Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը՝ դրամը:

Անկախ ժողովրդավարական պետության կազմավորումը նպաստել է ազգային ինքնագիտակցության և ավանդույթների պահպանմանն ու ամրապնդմանը, նաև բարձրացել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու դերը հասարակական կյանքում: Անկախության ժամանակաշրջանի կարևորագույն նվաճումներից է ազգային բանակի՝ որպես հայոց պետականության պաշտպանի կայացումը:

Այսօր Հայաստանը Միացյալ ազգերի կազմակերպության, Անկախ Պետությունների Համագործակցության, Եվրոխորհրդի, Առևտրի համաշխարհային կազմակերպության, Եվրասիական տնտեսական միության և 40-ից ավելի այլ միջազգային կազմակերպությունների անդամ է:

Անկախ Պետությունների Համագործակցության 30-ամյակ

Թեմա՝ **Հայաստանը և միջազգային հանրությունը**

Դիմերես՝ ՀՀ զինանշանը, խաղողի ողկույզ՝ ԱՊՀ անդամ պետությունների քանակը խորհրդանշող հատիկներով, հայկական զարդանախշ:
Դարձերես՝ ԱՊՀ պատկերանիշը:

Էսքիզների հեղինակներն են Էդուարդ Կուրղինյանը *(դիմերես)*,
Լուսինե Լալայանը *(դարձերես)*:
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	38,61 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրջը	ատամնավոր
Թողարկման քանակը	500 հազ
Շրջանառության մեջ է դրվել	01.10.2021 թ.

Անկախ Պետությունների Համագործակցությունը (ԱՊՀ) միջպետական միավորում է, որը հիմնադրվել է 1991 թ. դեկտեմբերի 8-ին՝ Բելառուսի, Ռուսաստանի և Ուկրաինայի ղեկավարների կողմից ԱՊՀ ստեղծման մասին Համաձայնագրի ստորագրմամբ: Համաձայնագրով հիմնվելով ժողովուրդների պատմական միասնության և նրանց միջև կապերի վրա, հաշվի առնելով պետությունների մտադրությունը՝ զարգացնելու իրենց հարաբերությունները պետական ինքնիշխանության փոխադարձ ճանաչման և հարգանքի հիման վրա, կողմերը պայմանավորվեցին ԱՊՀ կազմավորման շուրջ:

Ներկայում ԱՊՀ անդամներն ինը պետություններ են, որոնց համատեղ գործունեության հիմնական ուղղություններն են տնտեսական ինտեգրումը, հումանիտար, քաղաքական, իրավական և անվտանգության մարմինների ոլորտային համագործակցությունը, միասնական տեղեկատվության հարթակի ձևավորումը:

ԱՊՀ-ն հիմնված է անդամ պետությունների ինքնիշխանության հավասարության սկզբունքների վրա և ծառայում է այդ երկրների միջև բարեկամության, բարիդրացիության, ազգամիջյան ներդաշնակության, վստահության, փոխըմբռնման և փոխշահավետ համագործակցության ամրապնդմանը:



Ալեքսանդր Սպենդիարյան

Ծննդյան 150-ամյակ

Թեմա՝ **Անվանի անհատներ**

Երաժշտություն

Դիմերես՝ Սպենդիարյանի հուշարձանը (քանդակագործներ՝ Ա. Սարգսյան, Ղ. Ջուբարյան, ճարտարապետներ՝ Գ. Աղաբաբյան, Ֆ. Դարբինյան, 1953 թ.)՝ Օպերայի և բալետի թատրոնի շենքի (ճարտարապետ՝ Ա. Թամանյան, 1932 թ.) ֆոնին, և պարուհի:
Դարձերես՝ Սպենդիարյանի դիմապատկերը, «Երեք արմավենի» ստեղծագործության նոտաների էջեր, ջութակի, քանոնի և արմավենիների ոճավորված պատկերներ:

Էսքիզների հեղինակն է Վարդան Վարդանյանը:
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

Անվանական արժեքը	**1000 դրամ**
Մետաղը/հարգը	**արծաթ 925°**
Քաշը	**33,6 գ**
Տրամագիծը	**40,0 մմ**
Որակը	**պրուֆ**
Դրամաեզրը	**ատամնավոր**
Թողարկման ծավալը	**500 հատ**
Շրջանառության մեջ է դրվել	**13.10.2021 թ.**

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԸ (1871-1928 թթ.) հայ մեծանուն կոմպոզիտոր է, դիրիժոր, մանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1926 թ.):

1892-1894 թթ. կոմպոզիցիայի տեսություն է ուսումնասիրել Ն. Կլենովսկու մոտ՝ Մոսկվայում, 1896-1900 թթ.՝ Ն. Ռիմսկի-Կորսակովի մոտ՝ Պետերբուրգում: Ապրել է Ղրիմում, ծավալել է դիրիժորական և երաժշտահասարակական գործունեություն: Որպես կոմպոզիտոր ձևավորվել է ռուսական և հայկական մշակույթների ազդեցությամբ:

1924 թ-ից Սպենդիարյանը ապրել է Երևանում: Այդ շրջանում ստեղծել է «Երևանյան էտյուդները» և ավարտին հասցրել հայկական երաժշտական թատրոնի լավագույն ստեղծագործություններից մեկը՝ «Ալմաստ» հերոսահայրենասիրական օպերան (ըստ Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի, լիբրետոն՝ Ս. Պարնոկի):

Սպենդիարյանը մեծ դեր է ունեցել հայկական ազգային կոմպոզիտորական դպրոցի ձևավորման գործում՝ հարստացրել է հայկական երաժշտությունը նոր թեմաներով, ընդարձակել ժանրերը, հիմք դրել հայկական ազգային սիմֆոնիզմին: Նրա «Ղրիմի էսքիզները», «Երեք արմավենի», «Երևանյան էտյուդները» և այլ սիմֆոնիկ գործեր հայկական սիմֆոնիկ երաժշտության դասական նմուշներ են:

Երևանում գործում է Սպենդիարյանի տունթանգարանը: Կոմպոզիտորի անունն են կրում Երևանի օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնը (1933 թ.) և թիվ 1 երաժշտական դպրոցը:

Առնո Բաբաջանյան

Ծննդյան 100-ամյակ

Թեմա՝ **Անվանի անհատներ**

Երաժշտություն

Դիմերես՝ հարսանեկան զույգ, սոլի բանալի, ոճավորված վարդի և ձայնասկավառակի պատկերներ:
Դարձերես՝ Առնո Բաբաջանյանի դիմապատկերը, ձայնասկավառակի, դաշնամուրի ստեղների, նոտաների և գրչի ոճավորված պատկերներ:

Էսքիզների հեղինակն է Վարդան Վարդանյանը:
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	դրուֆ
Դրամաշուրջը	ատամնավոր
Թողարկման քանակը	500 հատ
Շրջանառության մեջ է դրվել	18.01.2021 թ.

ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԸ (1921-1983 թթ.) հայտնի հայ կոմպոզիտոր է, դաշնակահար, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1970 թ.):

Ավարտել է Երևանի և Մոսկվայի կոնսերվատորիաները: 1950-1956 թթ. դասավանդել է Երևանի կոնսերվատորիայում: Որպես բարձրարվեստ դաշնակահար աչքի է ընկել իր ստեղծագործությունների կատարմամբ: Ստեղծագործական ոճը ձևավորվել է Ա. Խաչատրյանի և Ս. Ռախմանինովի ազդեցությամբ և առավելապես արտահայտվել վաղ շրջանի ստեղծագործություններում՝ դաշնամուրի (1944 թ.) և ջութակի (1949 թ.) համար կոնցերտներում: «Վաղարշապատի պար», «Պրելյուդ» և «Էքսպրոմտ» գործերը 1947 թ. Պրահայում կայացած Երիտասարդության և ուսանողների համաշխարհային 1-ին փառատոնում արժանացել են առաջին մրցանակի: Կոմպոզիտորի ստեղծագործական անհատականությունը դրսևորվել է դաշնամուրի և նվագախմբի համար 1950 թ. գրված «Հերոսական բալլադում» (ԽՍՀՄ պետական մրցանակ, 1951 թ.), ապա դաշնամուրային տրիոյում (1952 թ.):

Բաբաջանյանը ստեղծագործել է տարբեր՝ դասական, պոպ, ջազ ոճերով: Նա սովետական երգի ականավոր վարպետներից է: Գրել է բազմաթիվ քնարական երգեր, երաժշտություն դրամատիկական ներկայացումների (Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է») և կինոնկարների («Առաջին սիրո երգը», համահեղինակ՝ Ղ. Սարյան, «Ամպրոպի արահետով», «Երջանկության մեխանիկան») համար:

Բաբաջանյանը սովետական ժողովուրդների կողմից սիրված կոմպոզիտորներից է, ով բացառիկ բնատուր տաղանդի, խոր զգացմունքայնության ու երաժշտական արտահայտչականության շնորհիվ իր ուրույն տեղն է զբաղեցնում հայկական և սովետական երաժշտության պատմության մեջ:

Գրիգոր Տաթևացի

Ծննդյան 675-ամյակ

Թեմա՝ **Անվանի անհատներ**

Գիտություն

Դիմերես՝ Տաթևի վանքը:
Դարձերես՝ Գրիգոր Տաթևացու խորհանդակը՝ Մոսկվայում Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդանիստ Սուրբ Պայծառակերպության հայկական եկեղեցու (ճարտարապետ՝ Ա. Դուլյան) դպտին:

Էսքիզների հեղինակներն են Կարապետ Աբրահամյանը *(դիմերես)*, Լուսինե Լալայանը *(դարձերես)*:
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	500 հատ
Շրջանառության մեջ է դրվել	18.01.2021 թ.

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻՆ (1346-1409 թթ.) Հայոց Եկեղեցու Եռամեծ վարդապետ է, փիլիսոփա, աստվածաբան, բանասեր, մանկավարժ, մանրանկարիչ, երաժիշտ:

Սովորել է Տաթևի վանքի վարդապետարանում, աշակերտել է մեծ աստվածաբան և իմաստասեր Հովհան վարդապետ Որոտնեցուն, որի մահից հետո գլխավորել է Տաթևի և Ապրակունիսի հոգևոր բարձրագույն դպրոցները, վարել աստվածաբանության, փիլիսոփայության, քերականության, երաժշտության տեսության և այլ դասընթացներ: Դասավանդել է նաև Մեծոփավանքի և Սաղմոսավանքի հոգևոր դպրոցներում: Զբաղվել է ազգային-եկեղեցական հարցերով, պայքարել կաթոլիկ քարոզիչների՝ ունիթորների դեմ՝ պաշտպանելով Հայ Եկեղեցու ուղղափառ դավանությունն ու ինքնուրույնությունը:

1390 թ. նա հաստատվել է Տաթևում, իր շուրջը համախմբել Սյունիքից ու Հայաստանի տարբեր վայրերից ուսանելու եկած աշակերտների: Իր մանկավարժական հայացքները ներկայացրել է «Սահմանադրություն դաստիարակության» աշխատությունում: Տաթևացու օրոք Տաթևի վանքի վարդապետարանը վերածվել է համալսարանի՝ դառնալով գիտության, մշակույթի, արվեստի, հոգևոր կյանքի կենտրոն:

Տաթևացին գրել է աստվածաբանական, դավանաբանական, մեկնողական, իմաստասիրական մեծարժեք աշխատություններ: Նշանավոր գործերից են «Գիրք հարցմանց» և «Ոսկեփորիկ» հանրագիտական երկերը, որտեղ ի մի են բերված հայ աստվածաբանական մտքի դարավոր ձեռքբերումները, ինչպես նաև «Ձմեռան» ու «Ամառան» քարոզգրքերը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Գրիգոր Տաթևացուն դասել է սրբերի կարգը, հիշատակը տոնում է Մեծ Պահքի 4-րդ կիրակիի նախընթաց շաբաթ օրը:

Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրման 200-ամյակ

Թեմա՝ Մշակույթ
Գիտություն, գրականություն

Դիմերես՝ Կալկաթայի Հայոց ճեմարանի շենքի և
Սուրբ Նազարեթ հայկական եկեղեցու պատկերներից հատվածներ:
Դարձերես՝ Կալկաթայի Հայոց ճեմարանի պատկերանիշը:

Էսքիզների հեղինակն է Լուսինե Լալայանը:
Հուշադրամը հատվել է Լիսվայի դրամահատարանում:

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Թողարկման քանակը	300 հատ
Շրջանառության մեջ է դրվել	25.03.2021 թ.

Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը հիմնադրվել է 1821 թ. Կալկաթայի (Հնդկաստան) Սուրբ Նազարեթ հայկական եկեղեցու մերձակայքում՝ ջուղայեցի բարերարներ Ա. Մուրադխանյանի և Մ. Վարդանյանի նախաձեռնությամբ: Տարբեր տարիներին ճեմարանին են միացվել Գալուցյան և Դավիթյան օրիորդաց հայկական դպրոցները, հաստատությունը համալրվել է գիշերօթիկ բաժնով: 1824 թ-ից, շուրջ 50 տարի, ճեմարանում գործել է նաև տպարան: 1828 թ. հիմնվել է Արարատյան գրադարանը, որն ունեցել է հայկական գրքերի և ձեռագրերի ժամանակի ամենամեծ հավաքածուն:

1999 թ. Կալկաթայի Գերագույն դատարանի որոշմամբ ճեմարանը հանձնվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի խնամակալությանը՝ ի դեմս Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ում վերապահվել է ճեմարանի գործունեությունը տնօրինելու իրավունքը:

Ճեմարանում դասավանդում են հայագիտական և բնագիտական մի շարք առարկաներ, իսկ կրթական ծրագրերը կազմված են այնպես, որ շրջանավարտները հեշտությամբ կարող են ընդունվել Հնդկաստանի ուսումնական հաստատություններ:

Իր գործունեության 200 տարիների ընթացքում ճեմարանում կրթություն են ստացել հազարավոր հայ երեխաներ Իրանից, Իրաքից, Մյանմայից, Հնդկաստանից և Հայաստանից: Այստեղ իրականացվում են բազմաթիվ ակադեմիական և մշակութային ծրագրեր, որոնք ավելի սերտ ու բազմակողմանի են դարձնում կապերը հայրենիքի հետ:

Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը հայկական սփյուռքի հայեցի կրթության և դաստիարակության օջախներից և ամենաազդեցիկ կրթական հաստատություններից մեկն է:

Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի հիմնադրման 100-ամյակ

Թեմա՝ **Մշակույթ**
Արվեստ

Դիմերես՝ Գաբրիել Սունդուկյանի հուշատախտակը և «Պեպո» պիեսի բեմադրությունից՝ թղթի և թելի ոճավորված պատկերներ:
Դարձերես՝ թատրոնի շենքի գծագիրը, թատրոնի պատկերանիշը և հայկական զարդանախշ:

Էսքիզների հեղինակն է Վարդան Վարդանյանը:
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:



Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Ոճակը	դրուֆ
Դրամաշուրջը	ատամնավոր
Թողարկման քանակ	500 հատ
Շրջանառության մեջ է դրվել	25.03.2021 թ.

Հայաստանի առաջին պետական թատրոնը հիմնադրվել է Երևանում, 1921 թ. օգոստոսի 16-ին: Թատրոնի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել 1922 թ. հունվարի 25-ին Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» ներկայացմամբ:

1937 թ. թատրոնը վերանվանվել է Գաբրիել Սունդուկյանի անունով: Թատրոնն իր շուրջն է հավաքել աշխարհի տարբեր երկրներում ապրող լավագույն հայ թատերական գործիչներին և 20-րդ դարի հայկական մշակույթի դիմագիծը կազմող արվեստագետներին: Տասնյակ տարիների հսկայածավալ աշխատանքի և ներդրումների շնորհիվ դարձել է հայկական թատերական արվեստի կենտրոնը: Մինչ օրս ժողովուրդն այն կոչում է «ՄԱՅՐ ԹԱՏՐՈՆ»:

Հիմնադրումից մինչև 1938 թ. թատրոնն իր գործունեությունն իրականացրել է Հանրապետության Հրապարակի վրա գտնվող հիմնական շենքերից մեկում, ապա տեղափոխվել է նոր շենք՝ ներկայիս Անգլիական այգում: 1962 թ. թատրոնի շենքն այրվել է: Այն վերակառուցվել է նույն վայրում և վերաբացվել 1966 թ. մարտի 5-ին:

1950-70-ական թթ. թատրոնը ԽՍՀՄ ամենանշանավոր թատրոններից մեկն է եղել: Թատրոնի՝ հատկապես շեքսպիրյան ներկայացումների հաջողություններով պայմանավորված՝ ԽՍՀՄ-ում կազմակերպվող առաջին շեքսպիրյան փառատոնը և կոնֆերանսը անցկացվել են Երևանում:

1960 թ. թատրոնը դարձել է ակադեմիական, իսկ 1996 թ.՝ ազգային:

Թատրոնը մշտապես աչքի է ընկել տարբեր սերունդների դերասանների ու ռեժիսորների ստեղծագործական համագործակցությամբ: Հավատարիմ մնալով իր հարյուրամյա պատմությանն ու ավանդույթներին՝ թատրոնն, այնուամենայնիվ, մնում է երիտասարդ՝ հնի և նորի յուրօրինակ զուգորդումներով:

Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի կազմակերպման 100-ամյակ

Թեմա՝ **Մշակույթ**
Արվեստ

Դիմերես՝ Պետրոս Ադամյանի խաղացանկից՝ Համլետի դերը խորհրդանշող ոճավորված պատկեր և դերասանուհու կերպար:
Դարձերես՝ Պետրոս Ադամյանի դիմահանդակը (հեղինակ՝ քանդակագործ Ա. Սարգսյան) և թատրոնի շենքի գրաֆիկական պատկերը:

Էսքիզների հեղինակներն են Վարդան Վարդանյանը *(դիմերես)*,
Լուսինե Լալայանը *(դարձերես)*:
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամատուրքը	ատամնավոր
Թողարկման քանակը	500 հատ
Շրջանառության մեջ է դրվել	25.03.2021 թ.

Թբիլիսիում հայկական ներկայացումներ կազմակերպվել են 1820-ական թթ-ից: Հայկական թատրոնը՝ որպես պրոֆեսիոնալ կառույց, հիմնադրվել է 1858 թ. և դարձել արևելահայ թատրոնի բնօրրանի լավագույն ավանդույթների անմիջական ժառանգորդը՝ ձեռնամուխ լինելով հայ նոր թատերարվեստի ստեղծմանը:

1921 թ. թատրոնը կազմակերպվել է որպես հայկական պետական դրամատիկական թատրոն: Բացումը տեղի է ունեցել Արտիստական թատրոնում (այժմ՝ Ռուսթավելու անվան թատրոն) Օ. Միրբոյի «Ժան Ռուլ» պիեսի ներկայացումով (ռեժիսոր՝ Ա. Բերոյան): Հիմնադիր կազմում էին Ի. Ալիխանյանը, Ա. Վրույրը, Օ. Մայսուրյանը, Ա. և Մ. Բերոյանները, Զաբելը, Ա. Ռշտունին և ուրիշներ: Առաջին տարիներին ներկայացումները տրվել են Թբիլիսիի տարբեր թատրոններում: 1936 թ. թատրոնը տեղափոխվել է Հավլաբար թաղամասում կառուցված նոր շենքը (առաջին ներկայացումը՝ Զանանի «Շահնամե») և սկսվել է թատրոնի ստեղծագործական վերելքի շրջանը: Այդ տարիներին բեմադրվել են ինչպես ազգային, այնպես էլ ռուս և արևմտաեվրոպական հեղինակների պիեսներ:

1955-1991 թթ. թատրոնը կոչվել է Ս. Շահումյանի, 1991 թ-ից՝ Պ. Ադամյանի անունով:

Թբիլիսիի հայկական պետական դրամատիկական թատրոնում հյուրախաղերով հանդես են եկել Վ. Փափազյանը, Հ. Աբելյանը, Վ. Վաղարշյանը, Հ. Ներսիսյանը, Գ. Զանիբեկյանը և այլ հայ ականավոր արտիստներ:

Ներկայում Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնը համարվում է վրաց-հայկական մշակութային և հասարակական հիմնական կենտրոններից մեկը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
20-ԱՄՅԱԿ
2011
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
2015
1000
ԴՐԱՄ
5000
ԴՐԱՄ
REPUBLIC OF ARMENIA
2009
10000
2004
100 ԴՐԱՄ
XIII
GOSHAVANK
2011
2012
VIRGO
ԿՈՒՅՍ
1000
ԴՐԱՄ
REPUBLIC OF ARMENIA
ԱՆԻ
1050
REPUBLIC OF ARMENIA
2010
DRAM 200000 ԴՐԱՄ

Հայաստանի Հանրապետության հուշադրամների շարքը և թողարկման տարեթվերը

(1994 - 2021)

ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պետականության դատմություն

Արցախ	(արծաթ, 1994 թ.)
Ազգային ժողովի շենքը	(արծաթ, 1995 թ.)
Արտաշեսյան թագավորություն	(արծաթ, 1995 թ.)
Արշակունյաց թագավորություն	(արծաթ, 1995 թ.)
Բագրատունյաց թագավորություն	(արծաթ, 1995 թ.)
Կիլիկյան թագավորություն	(արծաթ, 1995 թ.)
Հայաստանի Հանրապետության 10-ամյակ (1991-2001 թթ.),	(արծաթ, 2001 թ.)
Հայաստանի Հանրապետության 15-ամյակ (1991-2006 թթ.),	(արծաթ, 2006 թ.)
Հայաստանի Հանրապետության 20-ամյակ (1991-2011 թթ.),	(արծաթ, 2011 թ.)
Հայաստանի Հանրապետության 25-ամյակ (1991-2016 թթ.),	(արծաթ, 2016 թ.)
Հայաստանի Հանրապետության 25-ամյակ/ռուս. (1991-2016 թթ.),	(արծաթ, 2016 թ.)
Հայաստանի առաջին Հանրապետության 100-ամյակ (1918-2018 թթ.),	(արծաթ, 2018 թ.)
Հայաստանի Հանրապետության 30-ամյակ (1991-2021 թթ.),	(արծաթ, 2021 թ.)

Հայաստանի զինված ուժեր

Սարդարապատ	(արծաթ, 1994 թ.)
Հայաստանի զինված ուժեր	(ոսկի/արծաթ, 2005 թ.)
Հայոց բանակի կազմավորման 15-ամյակ	(ոսկի, 2007 թ.)
Շուշիի ազատագրման 15-ամյակ	(ոսկի, 2007 թ.)
Հայոց բանակի կազմավորման 20-ամյակ	(ոսկի/արծաթ, 2012 թ.)
Շուշիի ազատագրման 20-ամյակ	(ոսկի, 2012 թ.)
Հայոց բանակի կազմավորման 25-ամյակ	(ոսկի/արծաթ, 2017 թ.)
Շուշիի ազատագրման 25-ամյակ	(ոսկի, 2017 թ.)

Հայկական դրամներ

Ճախարակ	(արծաթ, 1994 թ.)
Ազգային դրամի 5 տարին	(արծաթ, 1998 թ.)
Ազգային դրամի 15 տարին	(արծաթ, 2008 թ.)
Ազգային դրամի 20 տարին	(արծաթ, 2013 թ.)
Ազգային դրամի 25 տարին	(արծաթ, 2018 թ.)

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱԿ-50 (արծաթ, 1995 թ.)
Հայաստան-Սփյուռք համաժողով (արծաթ, 1999 թ.)
Նոր հազարամյակ (արծաթ, 2000 թ.)
Հայաստանը Եվրախորհրդի անդամ (արծաթ, 2001 թ.)
Միջազգային բևեռային տարի (արծաթ, 2006 թ.)
ՀԱՊ-20 և ՀԱՊԿ-10 (արծաթ, 2012 թ.)
Եվրասիական տնտեսական միություն (արծաթ, 2015 թ.)
ՀԱՊ-25 և ՀԱՊԿ-15 (արծաթ, 2017 թ.)
Հայաստանի ԱՄՀ/ՀԲ անդամակցության հոբելյան (արծաթ, 2017 թ.)
Եվրասիական տնտեսական միության 5 տարին (արծաթ, 2019 թ.)
Անկախ Պետությունների Համագործակցության 30-ամյակ (արծաթ, 2021 թ.)

ԱՆՎԱՆԻ ԱՆՀԱՏՆԵՐ

Հայ զորավարներ

Մարշալ Բաղրամյան-100 (արծաթ, 1997 թ.)
Գարեգին Նժդեհ (ոսկեզօծ արծաթ/արծաթ, 2001 թ.)
Մարշալ Բաբաջանյան-100 (արծաթ, 2006 թ.)
Անդրանիկ Օզանյան-150 (արծաթ, 2015 թ.)
Վարդան Մամիկոնյան-1625 (ոսկի, 2016 թ.)
Վարդան Մամիկոնյան (ոսկի, 2016 թ.)
Ծովակալ Իսակով-125 (արծաթ, 2019 թ.)
Գևորգ Չավուշ-150 (արծաթ, 2020 թ.)

Պետական և հասարակական գործիչներ

Տիգրան Մեծ (ոսկի, 1999 թ.)
Տիգրան Մեծ (ոսկի, 2003 թ.)
Վռամշապուհ արքա (արծաթ, 2005 թ.)
Ալեքսանդր Մանթաշյան-175 (ոսկի, 2017 թ.)
Գալուստ Գյուլբենկյան-150 (ոսկի, 2019 թ.)
Խրիմյան Հայրիկ-200 (արծաթ, 2020 թ.)

Գիտություն

Անանիա Շիրակացի-1400 (արծաթ, 2005 թ.)
Արտեմ Միկոյան-100 (արծաթ, 2005 թ.)
Վիկտոր Համբարձումյան-100 (արծաթ, 2008 թ.)
Մովսես Խորենացի-1600 (արծաթ, 2010 թ.)
Լեո-150 (արծաթ, 2010 թ.)
Հովսեփ Օրբելի-125 (արծաթ, 2012 թ.)
Բենիամին Մարգարյան-100 (արծաթ, 2013 թ.)
Ոսկան Երևանցի-400 (արծաթ, 2014 թ.)
Գրիգոր Տաթևացի-675 (արծաթ, 2021 թ.)

Գրականություն

Պուշկին-200 (արծաթ, 1999 թ.)
Վիլյամ Սարոյան-100 (ոսկի, 2008 թ.)
Խաչատուր Աբովյան-200 (ոսկի, 2009 թ.)
Ռաֆֆի-175 (ոսկի, 2010 թ.)
Վահան Տերյան-125 (ոսկի, 2010 թ.)
Միսաք Մեծարենց-125 (ոսկի, 2011 թ.)
Հովհաննես Շիրազ-100 (ոսկի, 2014 թ.)
Հովհաննես Թումանյան-150 (ոսկի, 2019 թ.)

Կերպարվեստ, ճարտարապետություն

Արշիլ Գորկի-100	(ոսկի, 2004 թ.)
Մարտիրոս Սարյան-125	(ոսկի, 2005 թ.)
Հակոբ Գյուրջյան-125	(ոսկի, 2006 թ.)
Հովհաննես Այվազովսկի	(արծաթ, 2006 թ.)
Ժան Գառզու-100	(ոսկի, 2007 թ.)
Վարդգես Սուրենյանց-150	(արծաթ, 2010 թ.)
Թեոդոր Ամենոսովիչ	(արծաթ, 2010 թ.)
Թորոս Ռոսլին-800	(ոսկի, 2011 թ.)
Ստեփան Աղաջանյան-150	(արծաթ, 2013 թ.)
Արա Բեբարյան-100	(արծաթ, 2013 թ.)
Էդուարդ Իսաբեկյան-100	(արծաթ, 2014 թ.)
Փանոս Թերլեմեզյան-150	(արծաթ, 2015 թ.)
Արշակ Ֆեթվաճյան-150	(արծաթ, 2016 թ.)
Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյան-125	(արծաթ, 2016 թ.)
Հովհաննես Այվազովսկի-200	(ոսկի, 2017 թ.)
Հովհաննես Զարդարյան-100	(արծաթ, 2018 թ.)
Վարդան Մախոխյան-150	(արծաթ, 2019 թ.)
Ժանսեմ-100	(ոսկի/արծաթ, 2020 թ.)
Եղիշե Թադևոսյան-150	(արծաթ, 2020 թ.)

Երաժշտություն

Արամ Խաչատրյան-100	(ոսկի/արծաթ, 2002 թ.)
Կոմիտաս	(ոսկի, 2006 թ.)
Սայաթ-Նովա-300	(ոսկի, 2012 թ.)
Կոմիտաս-150	(արծաթ, 2019 թ.)
Ալեքսանդր Սպենդիարյան-150	(արծաթ, 2021 թ.)
Առնո Բաբաջանյան-100	(արծաթ, 2021 թ.)

Կինո, թատրոն, կրկես

Լեոնիդ Ենգիբարյան-75	(արծաթ, 2010 թ.)
Սերգեյ Փարաջանով	(արծաթ, 2012 թ.)
Վահրամ Փափազյան-125	(ոսկի, 2013 թ.)
Համո Բեկնազարյան-125	(արծաթ, 2017 թ.)
Անրի Վեռնոյ-100	(արծաթ, 2020 թ.)
Հրաչյա Ներսիսյան-125	(ոսկի, 2020 թ.)

Սպորտ

Տիգրան Պետրոսյան-70	(արծաթ, 1999 թ.)
Ֆուտբոլի արքաները	(արծաթ, 2008-2011 թթ.)
Պելե, Էյսեբիո, Լև Յաշին, Ֆրանց Բեկենբաուեր, Զբիգնև Բոնեկ, Մարիո Կեմպես, Յոհան Կրոյֆ, Միշել Պլատինի	

ՄՇԱԿՈՒՅԹ

Գիտություն, գրականություն

Հայոց գրերի գյուտի 1600-ամյակ	(ոսկի, 2002 թ.)
«Մայյան ողբերգության» ոդեմի 1000-ամյակ	(արծաթ, 2002 թ.)
Մատենադարան-50	(արծաթ, 2007 թ.)
Մխիթար Գոշի «Գիրք Դատաստանի» 825-ամյակ	(արծաթ, 2009 թ.)
Գլաձորի համալսարանի 725-ամյակ	(արծաթ, 2009 թ.)
Հայ գրքի տպագրության 500-ամյակ	(արծաթ, 2012 թ.)
Հայկական այբուբենի տառերը, 39 տեսակի	(ոսկի/արծաթ, 2013 թ.)
Լազարյան ճեմարանի հիմնադրման 200-ամյակ	(արծաթ, 2015 թ.)
Հայաստանի պատմության թանգարանի հիմնադրման 100-ամյակ	(արծաթ, 2019 թ.)
Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100-ամյակ	(արծաթ, 2019 թ.)
Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրման 200-ամյակ	(արծաթ, 2021 թ.)

Արվեստ

Օպերայի և բալետի թատրոնի հիմնադրման 75-ամյակ (արծաթ, 2008 թ.)

Ջազ (արծաթ, 2010 թ.)

Հայկական զորգ (ոսկեզօծ արծաթ/արծաթ, 2018 թ.)
Վիշապագորգ, Արևագորգ, Արծվագորգ, Խորանագորգ, Խաչխորան զորգ, Մեղվաբուն զորգ, Կենաց ծառ զորգ, Վահանակիր զորգ, Որոտան զորգ, Պռոշաբերդ զորգ

Աշխարհի կերամիկան (արծաթ, 2018 թ.)
Հայկական կերամիկա, Ռուսական կերամիկա, Հունական կերամիկա, Չինական կերամիկա, Իրանական կերամիկա

Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի հիմնադրման 100-ամյակ (արծաթ, 2021 թ.)

Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական ողեական դրամատիկական թատրոնի կազմակերպման 100-ամյակ (արծաթ, 2021 թ.)

ԿՐՈՆ

Դիցաբանություն

Սասունցի Դավիթ (արծաթ, 1994 թ.)

Անահիտ Աստվածուհի (ոսկի, 1997 թ.)

Հայկ Նահապետ (ոսկի, 2007 թ.)

Քրիստոնեություն

Նոյի վայրէջքը Արարատից (ոսկի, 1999 թ.)

Սահակ Ա Պարթև (արծաթ, 2005 թ.)

XX դարի հայոց կաթողիկոսներ (ոսկի, 2008 թ.)

Սուրբ Սարգիս զորավար (ոսկի, 2009 թ.)

Ավետարանի տեսարանները հայ մանրանկարչությունում (արծաթ, 2010 թ.)
Ավետում, Մոգերի երկրպագությունը, Մուտք Երուսաղեմ, Համբարձում

Վիեննայի Մխիթարյան միաբանության հիմնադրման 200-ամյակ (արծաթ, 2011 թ.)

Նոյյան տապան (7,77 գ/15,55 գ/31,1 գ) (արծաթ, 2012 թ.)

Նոյյան տապան (1,0 գ/7,78 գ/15,55 գ/31,1 գ) (ոսկի, 2017 թ.)

Վենետիկի Մխիթարյան միաբանության հիմնադրման 300-ամյակ (արծաթ, 2017 թ.)

Կրոնական հուշարձաններ

Գառնի (արծաթ, 1994 թ.)

Սբ Էջմիածին (ոսկի/արծաթ, 1998 թ.)

Անի (ոսկի/արծաթ, 1998 թ.)

Հաղպատ (արծաթ, 1998 թ.)

Աղթամար (ոսկի/արծաթ 1999 թ.)

Գանձասարի վանք (արծաթ, 2004 թ.)

Հայաստանի խաչքարեր (արծաթ, 2011 թ.)
Էջմիածնի խաչքար, Կեչառիսի խաչքար, Գնդեվանքի խաչքար, Գոշավանքի խաչքար, Նորավանքի խաչքար, Սանահինի խաչքար

Հայկական վանքեր և եկեղեցիներ (արծաթ, 2012 թ.)
Սբ Էջմիածնի Մայր տաճար, Կեչառիսի վանք, Գնդեվանք, Գոշավանք, Նորավանք, Սանահին

Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար (արծաթ, 2020 թ.)

Էջմիածնի զանձերը

Սուրբ Գեղարդ (արծաթ, 2013 թ.)

Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջը (արծաթ, 2014 թ.)

Սրբալույս Մյուռոնի կաթսա (արծաթ, 2014 թ.)

Խոտակերաց Սուրբ Նշան (արծաթ, 2016 թ.)

Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքով խաչ (արծաթ, 2016 թ.)

Սուրբ Գևորգի մասունքով խաչ (արծաթ, 2016 թ.)

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Երկրաշարժի 10-ամյա տարելից (արծաթ, 1998 թ.)
Պետբանկի 110-ամյակ (արծաթ, 2003 թ.)
ՀՀ վճռաբեկ դատարանի 10-ամյակ (ոսկի, 2008 թ.)
Անի-1050 (ոսկի, 2011 թ.)
Արտաշատ-2200 (ոսկի, 2011 թ.)
Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից (արծաթ, 2015 թ.)
ՀՀ սահմանադրական դատարանի 20-ամյակ (արծաթ, 2015 թ.)
Երևան-2800 (արծաթ, 2018 թ.)
Սարդարապատի հերոսամարտի 100-ամյակ (արծաթ, 2018 թ.)
Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 75-ամյակ (արծաթ, 2020 թ.)

ԲՆՈՒԹՅՈՒՆ

Բուսական աշխարհ

Ծիրան (արծաթ, 1994 թ.)
Հայկական խաղող (արծաթ, 2007 թ.)
Ծաղիկների գեղեցկությունը (արծաթ, 2010-2011 թթ.)
Գալանտուս Արյուտենկոյի, Լվածաղիկ Զանգեզուրի, Արոսենի Հայասանյան, Քրքում Ադամի
Նուռ (ոսկի, 2011 թ.)
Աշխարհի ամենահին ծառերը (արծաթ, 2014 թ.)
Սխտորաշենի սոսի, Հարյուրավոր ձիերի շագանակենի, Հրեշտակի կաղնի, Գեներալ Շերմանի ծառը

Կենդանական աշխարհ

Կովկասյան ջրասամույր (արծաթ/ոդինձ-նիկել, 1997 թ.)
Հայկական ոռոր (արծաթ/ոդինձ-նիկել, 1998 թ.)
Կովկասի կենդանական աշխարհ (արծաթ, 2006-2008 թթ.)
Լայնականջ ոզնի, Անդրկովկասյան գորշ արջ, Կովկասյան անտառակատու, Միջերկրածովային կրիա, Առաջավորասիական ընձառյուծ, Լայնաքիթ բադ, Իշխան, Հայկական իժ, Բեզոարյան այծ, Հայկական մուֆլոն, Անդրկովկասյան տակիրյան կորագլուխ, Կովկասյան թավոռն բվիկ
Կովկասյան ընձառյուծի տարի (արծաթ, 2019 թ.)

Բնության հուշարձաններ

Աշխարհի լաբիրինթոսները (արծաթ, 2016-2017 թթ.)
Բոսոռնի լաբիրինթոսը, Վաալսի լաբիրինթոսը, Բարսելոնայի լաբիրինթոսը, Մազոնեի լաբիրինթոսը

ՍՊՈՐՏ

Շախմատի 32-րդ օլիմպիադա (արծաթ, 1996 թ.)
Շախմատի 32-րդ օլիմպիադա (արծաթ, 1996 թ.)
Շախմատի 32-րդ օլիմպիադա (ոդինձ-նիկել, 1996 թ.)
XVIII ձմեռային օլիմպիական խաղեր (արծաթ, 1998 թ.)
1998 թ. ֆուտբոլի աշխարհի առաջնություն (արծաթ, 1998 թ.)
Առաջին համահայկական խաղեր (արծաթ, 1999 թ.)
2006 թ. ֆուտբոլի աշխարհի առաջնություն (արծաթ, 2004 թ.)
Շախմատի 37-րդ օլիմպիադա (ոսկի, 2006 թ.)
Մենամարտի արվեստը (արծաթ, 2011-2012 թթ.)
Ջյուդո, Ուշու, Կարատե, Կոխ
2014 թ. ֆուտբոլի աշխարհի առաջնություն (արծաթ, 2014 թ.)
2018 թ. ֆուտբոլի աշխարհի առաջնություն (արծաթ, 2018 թ.)

ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐ

Կենդանակերպի նշանները (արծաթ, 2007-2008 թթ./ոսկի, 2008-2009 թթ.)
Խոյ, Ցուլ, Երկվորյակներ, Խեցգետին, Առյուծ, Կույս, Կշեռք, Կարիճ, Աղեղնավոր, Այծեղջյուր, Ջրհոս, Ձկներ

2022 թվականի Հայաստանի Հանրապետության հուշադրամների թողարկման ծրագիրը

Եղիշե Չարենց-125

Անվանական արժեքը	10 000 դրամ
Մետաղը/հարգը	ոսկի 900°
Քաշը	8,6 գ
Տրամագիծը	22,0 մ
Որակը	դրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Թողարկման քանակը	300 հաս

Դավիթ Բեկ

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	դրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Թողարկման քանակը	250 հաս

Օհան Դուրյան-100

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Թողարկման քանակը	200 հատ

Հայոց բանակի կազմավորման 30-ամյակ

Անվանական արժեքը	10 000 դրամ
Մետաղը/հարգը	ոսկի 900°
Քաշը	8,6 գ
Տրամագիծը	22,0 մմ
Ձևը	կլոր
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Թողարկման քանակը	400 հատ

Օգանեսոն (Og)

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Թողարկման քանակը	500 հատ

Հայոց բանակի կազմավորման 30-ամյակ

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Ձևը	ութանկյուն
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Թողարկման քանակը	400 հատ

Դրամահատարաններ

ՀՀ կենտրոնական բանկի 2021 թ. հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված ութ արծաթե հուշադրամների հատումն իրականացվել է Լիտվայի դրամահատարանում:

Լիտվայի դրամահատարան

LIETUVOS MONETŲ KALYKLA
LITHUANIAN MINT

Լիտվայի դրամահատարանը հիմնադրվել է 1990 թ. դեկտեմբերի 10-ին Վիլնյուսում: Գործունեության առաջին տարիներին դրամահատարանը հատում էր միայն շրջանառու մետաղադրամներ, իսկ 1993 թ-ից սկսած հատել է նաև հուշադրամներ, հուշամեդալներ, հուշանվերային արտադրանք:

Եվրոմիության անդամ դառնալուց հետո՝ 2015 թ. հունվարի 1-ից, Լիտվայի տարածքում սկսեց շրջանառվել եվրոն, և դրամահատարանին վստահվեց նաև եվրո մետաղադրամների արտադրությունը:

Ժամանակակից սարքավորումների, տեխնոլոգիական նորարարությունների կիրառության, արտադրանքի բարձր որակի ապահովման շնորհիվ այսօր Լիտվայի դրամահատարանը դրամագիտական արժեքների արտադրության շուկայում համարվում է առաջատարներից մեկը: Դրա վառ ապացույցը 2020 թ. Բեռլինում կայացած Արժույթի համաշխարհային տոնավաճառում (World Money Fair) ստացած մրցանակներն են:

Լիտվայի դրամահատարանը մետաղադրամներ է հատում մի շարք երկրների համար, որոնց թվում են Հայաստանը, Բելառուսը, Լատվիան, Էստոնիան, Սլովենիան, Մոլդովան, Ղրղզստանը, Վրաստանը, Լյուքսեմբուրգը, Ֆինլանդիան: Երեսնամյա գործունեության ընթացքում դրամահատարանը իրականացրել է բազմաթիվ ծրագրեր, թողարկել ավելի քան 5 մլն հուշադրամ՝ կիրառելով հատման ավելի քան 20 տեխնոլոգիա: Լիտվայի դրամահատարանը հատել է նաև աշխարհում առաջին թվային մետաղադրամը (digital coin).

ՀՀ կենտրոնական բանկի հետ Լիտվայի դրամահատարանը համագործակցում է 2001 թ-ից: Այստեղ են հատվել ՀՀ կենտրոնական բանկի 2014-2021 թթ. հուշադրամների թողարկման ծրագրերով նախատեսված բազմաթիվ հուշադրամներ, այդ թվում՝ միջազգային դրամագիտական մրցույթներում մրցանակների արժանացած «Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելից», «Երևան-2800», «Կոմիտաս-150», «Ժանսեմ-100» և այլ հուշադրամներ:

Диплом

XV Международный конкурс монет

Монетное созвездие–2021

III место в номинации

Монетная классика

Жансем – 100-летие со дня рождения

Центральный банк Армении

Diploma

XV International coin contest

Coin Constellation–2021

III place in the nomination

Coin classic

Jansem – 100th Anniversary of Birth

Central Bank of Armenia

Организатор конкурса – Издательский дом «Уотер Марк»
Contest Organizer – Water Mark Publishing House

Председатель жюри конкурса Анна Кашурина
Head of the Contest Jury Anna Kashurina

Диплом

XV Международный конкурс монет

Монетное созвездие–2021

Победитель в номинации

Приз зрительских симпатий

Кафедральный собор Святого Эчмиадзина

Центральный банк Армении

Diploma

XV International coin contest

Coin Constellation–2021

Winner in the nomination

People's choice award

Mother Cathedral of Holy Etchmiadzin

Central Bank of Armenia

Организатор конкурса – Издательский дом «Уотер Марк»
Contest Organizer – Water Mark Publishing House

Председатель жюри конкурса Анна Кашурина
Head of the Contest Jury Anna Kashurina

Միջազգային մրցույթ - 2021

2021 թ. ՀՀ կենտրոնական բանկը մասնակցել է
Ռուսաստանի Դաշնությունում անցկացված
«**Դրամների համաստեղություն-2021**»
15-րդ միջազգային մրցույթին, որին մասնակցության հայտով
դիմել էր 31 կազմակերպություն 22 երկրից և ներկայացրել
2020 թ. թողարկված 220 հուշադրամ:
Մրցույթի հաղթողներն ընտրվել են միջազգային
ժյուրիի քվեարկության արդյունքներով:

Մրցույթում ՀՀ երկու հուշադրամ արժանացել է մրցանակի.

«**Ժանսեմ-100**» ոսկե հուշադրամը
գրավել է 3-րդ տեղը «**Դասական հուշադրամ**» անվանակարգում,
«**Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար**» արծաթե հուշադրամը
հաղթող է ճանաչվել «**Հանդիսատեսի համակրանք**» անվանակարգում:

«Ժանսեմ-100» ոսկե հուշադրամի էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:



ԷԴՈՒԱՐԴ ԿՈՒՐՂԻՆՅԱՆԸ Ֆիլատելիայի և դրամագիտության համահայկական ակադեմիայի թղթակից անդամ է, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ: Արժանացել է միջազգային բազմաթիվ մրցանակների ու մեդալների, շուրջ 50 նամականիշների, փոստային բացիկների, բուկլետների և հուշադրամների հեղինակ է: Նրա հեղինակած միջազգային մրցանակակիր հուշադրամների շարքում են «Լվածաղիկ Զանգեզուրի», «Ջազ», «Արտաշատ-2200», «Մովսես Խորենացի-1600» հուշադրամները, ինչպես նաև «Հայաստանի վայրի ծառերը» շրջանառու հիշատակային մետաղադրամների շարքը, որն Արժութային հարցերով միջազգային ասոցիացիայի (IACA) կողմից Մադրիդում կազմակերպված միջազգային դրամագիտական մրցույթում արժանացել է պատվավոր մրցանակի՝ «Լավագույն հիշատակային շրջանառու մետաղադրամ-2015» անվանակարգում:

«Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար» արծաթե հուշադրամի նախագծի հեղինակն է «CIT Coin Invest AG» ընկերությունը:

«Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար» հուշադրամի էսքիզները պատրաստվել են ՀՀ կենտրոնական բանկի արժույթի թողարկման և դրամագիտության կենտրոնի նախկին ղեկավար Սուրեն Սիմոնյանի և նկարիչ-դիզայներ Արամ Ուռուտյանի անմիջական ներգրավվածությամբ:

Հուշադրամի բուկլետի տեքստերի կազմման աշխատանքներին աջակցություն է ցուցաբերել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Ներքին մրցույթ - 2021

2021 թ. ՀՀ կենտրոնական բանկը կազմակերպել է
«**Տարվա լավագույն հուշադրամը**» անվանակարգով ներքին մրցույթ:
Մրցույթին ներկայացվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից
2021 թ. թողարկված հուշադրամները:

ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցները նախապատվությունը տվել են
«**Առնո Բաբաջանյան-100**» արծաթե հուշադրամին
(էսքիզների հեղինակ՝ Վարդան Վարդանյան):

Բովանդակություն

Ուղերձ	Մարտին Գալստյան	2
Հուշադրամներ 2021	Գևորգ Թումանյան	4
Հայոց պետականություն	Հայաստանի Հանրապետության 30-ամյակ (1991-2021)	6
Հայաստանը և միջազգային հանրությունը	Անկախ Պետությունների Համագործակցության 30-ամյակ	8
Անվանի անհատներ. երաժշտություն	Ալեքսանդր Սպենդիարյան. ծննդյան 150-ամյակ	10
Անվանի անհատներ. երաժշտություն	Առնո Բաբաջանյան. ծննդյան 100-ամյակ	12
Անվանի անհատներ. գիտություն	Գրիգոր Տաթևացի. ծննդյան 675-ամյակ	14
Մշակույթ. գիտություն, գրականություն	Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրման 200-ամյակ	16
Մշակույթ. արվեստ	Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի հիմնադրման 100-ամյակ	18
Մշակույթ. արվեստ	Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի կազմակերպման 100-ամյակ	20
Հայաստանի Հանրապետության հուշադրամների շարերը և թողարկման տարեթվերը (1994-2021)		23
2022 թ. Հայաստանի Հանրապետության հուշադրամների թողարկման ծրագիրը		28
Դրամահատարաններ	Լիտվայի դրամահատարան	30
Միջազգային մրցույթ – 2021		32
Ներքին մրցույթ – 2021		35

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԴՐԱՄՆԵՐ 2021

ՀՀ կենտրոնական բանկի հրատարակություն

Կազմեցին՝ Նունե Տերյանը, Անժելա Գևորգյանը
Խմբագիրներ՝ Հարություն Համբարձումյան,
Ռուզաննա Վարդանյան, Գոհար Հովհաննիսյան
Ձևավորումը՝ Արամ Ուռուցյանի

Տպաքանակը՝ 600

cba.am